ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ,ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ Ի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է *Արցախի*[*9)] Հանրապետությունում ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (այսուհետ՝ մասհանումներ) հասկացությունը, մասհանումներ կատարողների շրջանակը, մասհանումների տեսակները, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, կարգավորում է մասհանումներին առնչվող այլ հարաբերություններ:

Հոդված 2. Մասհանումների հասկացությունը

Մասհանումները ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, վերակառուցման, նորոգման և պահպանման համար սույն օրենքով սահմանված կարգով և չափերով *իրավաբանական անձանց (այդ թվում՝ իրավաբանական անձանց՝ Արցախի*[*9)] *Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունների և մասնաճյուղերի)*[*1)] կողմից պետական բյուջե կատարվող պարտադիր հատկացումներն են:

Հոդված 3. Մասհանումների տեսակները

Մասհանումների տեսակներն են՝

ա) ավտոտրանսպորտային միջոցների շահագործմամբ այլ իրավաբանական անձանց[*1)] և ֆիզիկական անձանց *ծառայությունների մատուցումից, հանքարդյունահանման գործունեությունից*[*1)] ստացված հասույթից (առանց ավելացված արժեքի հարկի) կատարվող մասհանումները.

բ) գործունեության մյուս տեսակների գծով թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և ապրանքների իրացումից ստացված հասույթից (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) կատարվող մասհանումները:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 4. Մասհանումների դրույքաչափերը

1. Իրավաբանական անձինք (այդ թվում՝ իրավաբանական անձանց՝ Արցախի*[9)] Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) մասհանումները կատարում են հետևյալ դրույքաչափերով.

1) 2013 թվականի հունվարի 1-ից՝

ա. ավտոտրանսպորտային ծառայությունների մատուցումից ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 2 տոկոսի չափով,

բ. հանքարդյունահանման գործունեությունից ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 0.5 տոկոսի չափով,

գ. գործունեության մյուս տեսակների գծով ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 0.2 տոկոսի չափով.

2) (ուժը կորցրած է ճանաչվել) [*6)]

2. Սույն օրենքի իմաստով՝

1) արտարժույթի առուվաճառքի գործունեության մասով հասույթ է համարվում արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը.

2) հանձնարարության, կոմիսիայի և գործակալության պայմանագրերով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում հասույթ է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր):

3. Ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), մասհանումների հաշվարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ սույն օրենքին

համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հաշվարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը: *1),*3),*5)

Հոդված 5. Մասհանումների հաշվարկման և վճարման կարգը

1. Մասհանումների տարբեր դրույքաչափերով հաշվարկվող գործունեության տեսակներ իրականացնողները մասհանումները վճարում են գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափերով: Այդ նպատակով մասհանումներ կատարողները վարում են առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

*2. Մասհանումներ վճարողները սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված ժամկետներում իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում պետական բյուջե մասհանումների վճարման համար համապատասխան հաշվարկներ՝ Արցախի*9) Հանրապետության հարկային մարմնի կողմից սահմանված ձևով:*

3. Հաշվարկված մասհանումների գումարները վճարվում են պետական բյուջե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:

Սույն օրենքի իմաստով մասհանումների վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը:

Հաշվարկված մասհանումների գումարները պետական բյուջե են վճարվում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

*4. Վճարողների կողմից մասհանումների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար մասհանումների պարտավորությունների վերահաշվարկ, եթե ճշտված հաշվարկները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ ստուգված ժամանակաշրջաններին:*1)*

Հոդված 6. Մասհանումների ավել վճարված գումարի հաշվանցումը կամ վերադարձը

*1. Մասհանումների պարտավորությունների դիմաց հաշվանցումը, մասհանումների գերավճարի հաշվին հարկային և այլ*4) պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձն իրականացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:*

*2. Հաշվարկված մասհանումների պարտավորության գումարները չեն կարող նվազեցվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի: Այդ ժամկետը լրանալուց հետո մասհանումների պարտավորության գումարները նվազեցնող հաշվարկներ չեն կարող ներկայացվել:*3)*

ԳԼՈՒԽ 3

ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Մասհանումներ կատարողի իրավունքները

Մասհանումներ կատարողն իրավունք ունի՝

ա) մասհանումները գանձող մարմիններից պահանջել կատարել հաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկ.

բ) օրենքով սահմանված կարգով գանգատարկել մասհանումները գանձող մարմինների կամ պաշտոնատար անձանց գործողությունները.

գ) սույն օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջել և ստանալ վերադարձման ենթակա մասհանումների գումարները.

դ) ստանալ համապատասխան տեղեկանք մասհանումների կատարման մասին.

ե) դիմել պետական մարմիններին՝ մասհանումների կատարման արտոնություն ստանալու համար:

Հոդված 8. Մասհանումներ կատարողի պարտականությունները

Մասհանումներ կատարողը պարտավոր է՝

ա) սույն օրենքով սահմանված դրույքաչափերից ելնելով, ինքնուրույն հաշվարկել մասհանումների գումարը.

բ) ժամանակին կատարել մասհանումները.

գ) անհրաժեշտության դեպքում մասհանումները գանձող մարմիններ ներկայացնել համապատասխան փաստաթղթեր և տեղեկություններ.

դ) ներկայացնել մասհանումների կատարման գծով արտոնության իր իրավունքը հաստատող փաստաթղթերը.

ե) իրավասու մարմինների անցկացրած ստուգումների հետևանքով բացահայտված (թաքցված կամ պակաս ցույց տրված) մասհանումների գումարի չափով ուղղումներ կատարել հաշվապահական հաշվառման մեջ:

ԳԼՈՒԽ 4

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 9. Մասհանումների կատարման արտոնությունները

Մասհանումներից ազատվում են.

ա) Արցախի[*9)] *Հանրապետության պետական կառավարչական հիմնարկները, Արցախի*[*9)] *Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով.*

բ) ոչ առևտրային կազմակերպությունները՝ անհատույց սպառման մասով.

գ) թանկարժեք քարերի մշակումը, այդ թվում հանձնարարության, կոմիսիայի և գործակալության պայմանագրերով.

դ) Արցախի[*9)] *Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա՝*

- ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները.

- մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հաշվարկման օբյեկտի և ստացված հատուցման տարբերությունը:[*1)]

ե) (դադարել է գործել 2011 թվականի հունվարի 1-ից)[*2)]

Հոդված 10. Մասհանումների կատարման արտոնությունների սահմանումը

Մասհանումների կատարումից ազատման, ինչպես նաև մասհանումների գումարի նվազեցման կամ վճարման ժամկետի հետաձգման արտոնությունները սահմանվում են օրենքով:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի դրույթների խախտումն առաջացնում է *Արցախի*[*9)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

2. Կատարվող մասհանումները սահմանված ժամկետներում բյուջե չվճարվելու դեպքում մասհանումներ կատարողից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ժամանակին չմուծված գումարի *0,075*[*7),*9)] *տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար*[*1)]:

3. Մասհանումները թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ գանձվում են սույն օրենքին համապատասխան հաշվարկված՝ թաքցված կամ պակաս ցույց տրված մասհանումները, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 20[*8)] *տոկոսի չափով, իսկ խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում մասհանումները կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում տուգանք՝ մասհանման 40 տոկոսի չափով*[*8)]*:*

Մասհանումները թաքցնելը կամ պակաս ցույց տալը հարկային մարմին ներկայացված հաշվարկներում մասհանումների գումարը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

4. Վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվարկը սույն օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր տասնհինգ լրացված օրվա համար վճարողից գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ հաշվարկված մասհանումների ընդհանուր գումարի հինգ տոկոսի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ մասհանումների հաշվարկված ընդհանուր գումարը, իսկ տասնհինգ օրվա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատանքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ:

Սույն մասով սահմանված տուգանքի հաշվարկումը դադարում է մասհանումների հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու պահից կամ մասհանումների գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը ներառող ստուգման ավարտից:[*5)]

5. Թաքցված կամ պակաս ցույց տրված մասհանումները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված տույժերը և տուգանքները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:[*1)]

Հոդված 12. Մասհանումների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողությունը

Մասհանումների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է *Արցախի Հանրապետության հարկային մարմինը*[*9)]:

Հոդված 13. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է *Արցախի Հանրապետության հարկային մարմինը*[*9)]:

Հոդված 14. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ դրույթները կիրարկվում են 1999 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

15 մարտի 1999թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-52

Հավելված [*3)]
«Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

I. ԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն կարգով սահմանվում է պետական բյուջե վճարվող ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) (այսուհետ՝ մասհանումներ) գումարները օրենքով սահմանված դեպքերում մասհանումներ կատարողին կամ հաշվանցման և (կամ) վերադարձի իրավունք ձեռք բերողի՝ պետական բյուջեի հանդեպ հարկային և այլ [*4)] պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը:

2. Սույն կարգին համապատասխան հաշվանցվում և (կամ) մասհանումներ կատարողին վերադարձվում են հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող՝ սահմանված չափից ավելի վճարված մասհանումները:

II. ԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կարգում օգտագործված հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով՝

հարկային այլ տուգանքներ՝ որևէ հարկատեսակին (կամ առևտրի հարկին, հաստատագրված վճարներին) չվերաբերող տուգանքեր («Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ, 28-րդ, 28^3-րդ, 28^4-րդ, 28^5-րդ, 28^6-րդ և 32-րդ հոդվածներով սահմանված տուգանքները).

սոցիալական վճարներ՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովության վճարները.

այլ վճարներ՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված բնապահպանական և բնօգտագործման վճարները և «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարները.

հարկերին, մասհանումներին և վճարներին չվերաբերող տուգանքներ՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված տուգանքները.

այլ պարտավորություններ՝ հարկային, մասհանումների, այլ վճարների, պետական տուրքերի, հարկերին, մասհանումներին և վճարներին չվերաբերող տուգանքների պարտավորությունները.

գերավճար ՝

- սահմանված կարգով հաշվարկվող մասհանումների պարտավորության գումարից ավելի վճարված գումար, կամ՝

- պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ՝ օրենքով չնախատեսված դեպքերում)՝ մասհանումների համապատասխան գանձապետական հաշվին մասհանումներ կատարողի կամ մասհանումներ կատարողի անունից այլ անձի կողմից փաստացի փոխանցված (վճարված) գումար, կամ՝

- դատարանի վճռի կատարման արդյունքում կամ վերադաս հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումների հիման վրա մասհանումներ կատարողի օգտին (այդ թվում՝ նախկինում կատարված պարտավորության հետ վերադարձին վերաբերող) հաշվեգրված գումար, կամ՝

- հարկային պարտավորությունները, սոցիալական վճարների պարտավորությունները կամ հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքների պարտավորությունները գերազանցող գումարով հարկային պարտավորություններից, սոցիալական վճարների պարտավորություններից կամ հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքներից տվյալ մասհանումներին հարկային մարմնի կողմից հաշվանցված գումար (այլ վճարների և պետական տուրքերի պարտավորությունները գերազանցող գումարով մասհանումներին հաշվանցումներ չեն կատարվում).

հաշվանցվող գումար՝ պետական բյուջեի հանդեպ մասհանումների պարտավորությունից պակասեցվող (դեբետագրվող) գումար, որը արդյունք է՝

- փաստացի վճարման, կամ՝

- հարկային պարտավորություններից, սոցիալական վճարների պարտավորություններից կամ հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքներից մասհանումների պարտավորության դիմաց հաշվանցման, կամ՝

- մասհանումների հաշվարկի ներկայացման, կամ՝

- դատարանի վճռի կատարման, կամ

- վերադաս հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշման ընդունման.

հաշվանցում՝ *մասհանումներ կատարողի պարտավորության պակասեցում կամ մասհանումներ կատարողի հանդեպ պարտավորության ձևակերպում (գրանցում): Ընդ որում՝ մասհանումների պարտավորության պակասեցման դեպքում վերջինս մարվում է հաշվանցվող գումարով, իսկ մասհանումներ կատարողի հանդեպ մասհանումների պարտավորության գումարը ձևակերպվելու դեպքում գրանցվում (արձանագրվում) է հաշվանցվող գումարի և մասհանումներ կատարողի մասհանումների պարտավորության դրական տարբերության գումարը.*

վերադարձ՝ *մասհանումներ կատարողի բանկային հաշվին (ֆիզիկական անձը բանկային հաշիվ չունենալու դեպքում՝ նրա առաջարկած առևտրային բանկի միջոցով՝ անձնագրային տվյալներով) պետական բյուջեից գումարի փոխանցում.*

հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումար՝ *մասհանումների գերավճարի հաշվին մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար մասհանումներ կատարողի դիմումով պահանջված գումար.*

մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումար՝ *հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարի այն մասը, որը, սույն կարգին համապատասխան, հարկային մարմնի կողմից համարվել է մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա կամ առանց հարկ վճարողի դիմումի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը.*

գերավճարի մնացորդ՝ *մասհանումների գերավճարի այն մասը, որը, սույն կարգին համապատասխան, ժամանակագրական կարգով մարման արդյունքում մնացորդի արձանագրման (որոշման) օրվա դրությամբ պակասեցված չէ մասհանումներ կատարողի մասհանումների և այլ պարտավորությունների հաշվին.*

մասհանումների չհաշվանցվող մնացորդ՝ *մասհանումների դեբետային մնացորդի այն մասը, որը տվյալ օրվա դրությամբ ենթակա չէ մասհանումներ կատարողի այլ պարտավորության դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման: Մասհանումների չհաշվանցվող գումարի մեջ ներառվում են՝*

- այն գումարները, որոնք առաջացել են մասհանումներ կատարողի մասհանումների պարտավորության կատարման արդյունքում,

- այն գումարները, որոնց հաշվանցումը և (կամ) վերադարձը ուսումնասիրություններով կամ ստուգումներով (այդ թվում՝ նախկինում անցկացված) մերժվել է կամ համարվել չհիմնավորված,

- այն գումարները, որոնց հաշվանցման և (կամ) վերադարձի ժամկետի ընթացքը, սույն կարգին համապատասխան, կասեցված է.

մասհանումների դեբետային մնացորդ՝ *տվյալ օրվա դրությամբ մասհանումների չհաշվանցվող մնացորդի և գերավճարի մնացորդի հանրագումարը:*[*4)]

III. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՆՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՄԱՐՈՒՄԸ

1. Որևէ օրվա դրությամբ մասհանումներ կատարողի մասհանումների պարտավորության գումարը, մասհանումների դեբետային մնացորդում գերավճարի և չհաշվանցվող մնացորդների մեծությունները որոշվում են պարտավորությունների, հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարման միջոցով՝ հետևյալ կանոններով՝

1) [*4)] *ավելի վաղ առաջացած մասհանումների պարտավորությունը մարվում է (մարված է համարվում) ավելի վաղ առաջացած հաշվանցվող գումարների հաշվին, իսկ ավելի վաղ առաջացած հաշվանցվող գումարը մարվում է (մարված է համարվում) ավելի վաղ առաջացած մասհանումների պարտավորության կամ պետական բյուջեից ավելի վաղ վերադարձված գումարների հաշվին,*

2) հերթական մասհանումների պարտավորությունը (կամ հաշվանցվող գումարը) մարվելուց հետո մարվում է դրանից հետո առաջացած պարտավորությունը (հաշվանցվող գումարը),

3) որևէ ամսաթվի դրությամբ պարտավորությունները (կամ հաշվանցվող գումարները) մարվելուց հետո կատարվում է հաշվանցվող գումարների (պարտավորությունների) մարում:

2. Եթե վճարման փաստաթղթերում (անդորրագրում, վճարման հանձնարարականում) մասհանումներ կատարողի կողմից նշված է, թե գումարը մասհանումների որ պարտավորության մարմանը պետք է ուղղվի (կատարվել է նպատակային վճարում), ապա մասհանումների պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարումը կատարվում է՝ հաշվի առնելով նպատակային վճարումը:

3. Ժամանակագրական կարգի կիրառման ժամանակ, մասհանումներ կատարողի կողմից պետական բյուջե կատարված փաստացի վճարումների կամ հաշվանցումների հաշվին, եթե մասհանումներ կատարողը կոնկրետ չի նշել, թե որ ժամանակաշրջանի և որ պարտավորության մարմանն է այն վերաբերում (նպատակային չէ) կամ հաշվանցումը կատարվում է առանց մասհանումներ կատարողի դիմումի, առաջնահերթ մարվում են մասհանումների գծով առկա պարտավորությունները հետևյալ հերթականությամբ՝ մասհանումների գումարները, տույժերը, տուգանքները:[*4)]

IV. ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆ ՈՒ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԸ

1. Անկախ հաշվանցվող գումարների առկայությունից, մասհանումների ապառքների նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և (կամ) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մաս-հանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով

սահմանված դեպքերում տուգանքներ՝ մինչև գերավճարի մնացորդի հաշվին սույն կարգին համապատասխան ապառքի մարման կամ պարտավորության փաստացի կատարման օրը:

2. Հարկային մարմինների միջոցով պետական բյուջե հավաքագրվող հարկային պարտավորություններից, սոցիալական վճարների պարտավորություններից և հարկերին ու վճարներին չվերաբերող տուգանքների պարտավորություններից որևէ մեկի մասով մասհանումներ կատարողի մասհանումների պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարն արձանագրվելու դեպքում՝ մասհանումների ապառքների նկատմամբ, սույն գլխի 1-ին կետին համապատասխան, մինչ այդ հաշվարկված տույժերը և (կամ) տուգանքները վերահաշվարկվում են՝ հաշվի առնելով հաշվանցման ենթակա գումարի առաջացման ամսաթիվը և մեծությունը:

3. Հարկային մարմինների միջոցով պետական բյուջե չհավաքագրվող գումարների (վճարների և այլն) հաշվին մասհանումների պարտավորությունների դիմաց հաշվանցում կատարվելու դեպքում՝ մասհանումների ապառքների նկատմամբ, սույն գլխի 1-ին կետին համապատասխան, մինչ այդ հաշվարկված տույժերը և (կամ) տուգանքները չեն վերահաշվարկվում: Մասհանումների ապառքների նկատմամբ տույժերը և (կամ) տուգանքները հաշվարկվում են մինչև փաստացի հաշվանցման (համապատասխան գանձապետական հաշիվ գումարի մուտքագրման) օրը:

4. Եթե մասհանումների գերավճարների կամ գերավճարից տարբերվող գումարների հաշվին այլ պարտավորությունների դիմաց փաստացի հաշվանցված և (կամ) վերադարձված գումարների հաշվանցումը և (կամ) վերադարձը կատարելուց հետո մասհանումներ կատարողի կողմից ներկայացվել են ճշտված հաշվարկներ, որի արդյունքում փոխվում է փաստացի հաշվանցման և (կամ) վերադարձման օրվա դրությամբ հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների մեծությունը, ապա հաշվանցման օրվա դրությամբ կատարվում է մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների վերահաշվարկ (հաշվանցված այլ պարտավորության վերականգնում)՝ ավելի հաշվանցված գումարի չափով, իսկ վերադարձի դեպքում վերադարձի օրվա դրությամբ առաջադրվում է մասհանումների գծով պարտավորություն՝ ավելի վերադարձված գումարի չափով: Այդ դեպքերում տվյալ ճշգրտված ապառքների մասով օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում (վերահաշվարկվում) են տույժեր (տուգանքներ), ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշվարկվում (վերահաշվարկվում) են կրկնապատկվող տուգանքները:

5. Եթե մասհանումների գերավճարների հաշվին այլ պարտավորությունների դիմաց փաստացի հաշվանցված և (կամ) վերադարձված գումարների հաշվանցումը և (կամ) վերադարձը մասհանումներ կատարողի մոտ իրականացված ստուգմամբ (կամ վերստուգմամբ) համարվում են չհիմնավորված, ապա ստուգման արդյունքներով հաշվանցման օրվա դրությամբ կատարվում է մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների վերահաշվարկ (հաշվանցված այլ պարտավորության վերականգնում)՝ ավելի հաշվանցված գումարի չափով, իսկ վերադարձի դեպքում վերադարձի օրվա դրությամբ առաջադրվում է մասհանումների գծով պարտավորություն՝ ավելի վերադարձված գումարի չափով: Այդ դեպքերում տվյալ ճշգրտված ապառքների մասով օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում (վերահաշվարկվում) են տույժեր (տուգանքներ), ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշվարկվում (վերահաշվարկվում) են կրկնապատկվող տուգանքները:[*4)]

V. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*4)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են գերավճարի գումարի մնացորդի այն մասով, որը, օրենքով սահմանված պահանջներին և սույն կարգին համապատասխան, հարկային մարմնի կողմից համարվել է հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա:

2. Հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գերավճարի գումարը հիմնավորված չէ, եթե այն՝

1) մասհանումների պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարման արդյունքում պետք է համարվի մարված՝ գերավճարի առաջացումից հետո առաջացած՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան հաշվարկվող մասհանումների պարտավորությունների հաշվին.

2) սխալ հաշվարկների արդյունք է.

3) պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարման արդյունքում մարված կհամարվի հետագայում առաջացած՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող պարտավորությունների հաշվին.

4) առաջացնող՝ հաշվարկային և (կամ) վճարային փաստաթղթերում բացակայում են օրենքով դրանցում պարտադիր լրացման ենթակա տվյալները կամ վավերապայմանները:

3. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձը կարող են հիմնավորված համարվել միայն ստուգման (վերստուգման) արդյունքներով: Գերավճարի գումարով մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց փաստացի հաշվանցումը և (կամ) վերադարձը հաշվանցման և (կամ) վերադարձի հիմնավորվածության արձանագրում չեն:

VI. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*4)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծությունը հարկային մարմնի կողմից որոշվում (արձանագրվում) է՝

1) առանց ուսումնասիրության կամ ստուգման.

2) հաշվանցման և (կամ) վերադարձման նպատակով կամերալ ուսումնասիրությամբ.[*4)]

3) մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությամբ (մասհանումներ կատարողի մոտ այցելությամբ և նրա մոտ առկա փաստաթղթերի ուսումնասիրմամբ).

4) մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման ընթացքում (այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման շրջանակներում):

2. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են հարկային մարմնի կողմից համապատասխան եզրակացություն կազմելու միջոցով: Կամերալ ուսումնասիրություն կամ մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն անցկացվելու դեպքերում եզրակացությունը կազմվում է արձանագրության, իսկ համապատասխան ստուգում անցկացնելու դեպքում՝ ստուգման ակտի հիման վրա: Սույն կետում նշված, ինչպես նաև հաշվանցման ենթակա այլ գումարների հաշվին մասհանումների պարտավորությունների դիմաց հաշվանցման համար եզրակացությունների ձևերը սահմանում է վերադաս հարկային մարմինը՝ համաձայնեցնելով Արցախի[*9)] Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի[*5)] նախարարության հետ:[*4)]

3. Ուսումնասիրությունների կամ ստուգման արդյունքներով մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելիս ստուգման ակտում կամ ուսումնասիրությունների արձանագրության մեջ պարտադիր նշվում են այն հիմքերը (իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել), որոնց հիման վրա մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ չի կատարվում (հաշվանցումը և (կամ) վերադարձը մերժվում են):

VII. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*4)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Սույն կարգին համապատասխան՝ մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծությունը որոշելու նպատակով մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն, մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգում կամ մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգում անցկացնելու դեպքերում հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու կամ հաշվանցումը և (կամ) վերադարձը հիմնավորելու նպատակով մասհանումներ կատարողը հարկային մարմին (ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող անձանց) է ներկայացնում վճարումը հավաստող փաստաթղթերը (այդ թվում՝ անդորրագրերը, վճարման հանձնարարականները, բանկային հաշվից քաղվածքները), մասհանումների հաշվարկները, գնորդների հետ կնքած պայմանագրերը, պայմանագրերի կատարմանը վերաբերող փաստաթղթերը (այդ թվում՝ կատարողական ակտերը, ընդունման-հանձնման ակտերը), հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ փաստաթղթեր:

VIII. ԳԵՐԱՎՃԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*4)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Գերավճարի մնացորդի հաշվին մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ իրականացվում են առանց ուսումնասիրության, եթե՝

1) գերավճարը արձանագրվում է մասհանումների՝ օրենքով սահմանված մեծության կամ հարկային մարմնի կատարած հաշվարկի և վճարումը հավաստող փաստաթղթի (անդորրագրի, վճարման հանձնարարականի) համադրությամբ, կամ՝ [*4)]

2) մասհանումների պարտավորության բացակայության պայմաններում (ներառյալ՝ օրենքով չնախատեսված դեպքերում) կատարվել է վճարում, կամ՝ [*4)]

3) գերավճարի գումարը չի գերազանցում 100.0 հազար դրամը և ուսումնասիրության կամ ստուգման իրականացումը նպատակահարմար է իրականացնել հետագայում:

2. Գերավճարի մնացորդի հաշվին մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ իրականացվում են կամերալ ուսումնասիրությամբ, եթե՝

1) հարկային մարմնում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը բավարար է գերավճարի մնացորդն արձանագրելու համար.

2) հարկային մարմնի ղեկավարը (հարկային տեսչության պետը) որոշում է կայացրել այդ մնացորդի հետազոտությունն անցկացնել մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրության կամ ստուգման ընթացքում:

3. Եթե հարկային մարմնում առկա փաստաթղթերն անբավարար են հաշվանցվող գումարում մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն արձանագրելու համար, ապա այդ գումարը որոշվում է մասհանումներ կատարողի մոտ

անցկացվող մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությամբ (այսուհետ նաև՝ ուսումնասիրություն):

*4. Գերավճարի մնացորդի հաշվին մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի նպատակով ուսումնասիրություն կամ ստուգում կարող է իրականացվել նաև մասհանումներ կատարողի դիմումով:*

*5. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծության որոշման նպատակով անցկացվող ուսումնասիրության իրականացման կարգը սահմանվում է օրենքով:*

*IX. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*4)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ*

*1. Գերավճարի մնացորդի հաշվին մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցումն իրականացվում է մասհանումներ կատարողի գրավոր դիմումով (այսուհետ՝ դիմում), իսկ սույն կարգով նախատեսված դեպքերում՝ նաև առանց դիմումի:*

*2. Գերավճարի մնացորդը կարող է հաշվանցվել մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց առանց մասհանումներ կատարողի դիմումի, եթե մնացորդն արձանագրվում է կամերալ ուսումնասիրությամբ կամ առանց ուսումնասիրության: Եթե կատարված հաշվանցումների գումարը գերազանցում է 300.0 հազար դրամը, ապա մասհանումներ կատարողը հաշվանցումների վերջնական ձևակերպում տալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է կատարված հաշվանցումների մասին:*

3. Գերավճարի մնացորդի վերադարձը կամ միաժամանակ՝ հաշվանցումն ու վերադարձը, իրականացվում են միայն մասհանումներ կատարողի դիմումի հիման վրա:

X. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը հաշվանցվում է մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց՝ նախ մարելով տվյալ հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների), վճարատեսակի, պետական տուրքի մասով հաշվարկված հարկի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների), վճարի, պետական տուրքի բոլոր գումարները, ապա՝ ապառքների նկատմամբ հաշվարկված տույժերի բոլոր գումարները, այնուհետև՝ հաշվարկված տուգանքների բոլոր գումարները, իսկ հարկային այլ տուգանքներից ու հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքներից առաջնահերթ մարվում են կրկնապատկվող և դեռևս չկրկնապատկված տուգանքների գումարները:

2. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը նախ ուղղվում է մեկ հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների), վճարատեսակի, պետական տուրքի, բոլոր հարկային այլ տուգանքների կամ հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքների տեսակի մասով պարտավորությունների մարմանը, ապա՝ հաջորդ հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների), վճարատեսակի, պետական տուրքի, դեռևս չընտրված բոլոր հարկային այլ տուգանքների կամ հարկերին և վճարներին չվերաբերող տուգանքների տեսակի մասով պարտավորությունների մարմանը: Առանց մասհանումներ կատարողի դիմումի հաշվանցումներ կատարելիս, ինչպես նաև այն դեպքերում, երբ մասհանումներ կատարողը դիմումի մեջ չի նշել այլ պարտավորությունների մարման հերթականությունը, այլ պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ՝

1) հարկային այլ տուգանքները, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված տուգանքները՝ առաջնային մարելով կրկնապատկվող և դեռևս չկրկնապատկված տուգանքների գումարները.

2) այն հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների) մասով բոլոր հարկային պարտավորությունները, որոնց ապառքն ավելի վաղ է առաջացել, ապա՝ ավելի ուշ առաջացածներինը (նույն օրը տարբեր հարկատեսակների կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների մասով ամենավաղ առաջացած ապառքների դեպքում հարկատեսակի կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների ընտրությունը կատարվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածում տրված թվարկման հերթականությանը համապատասխան).

3) այն վճարատեսակի մասով բոլոր պարտավորությունները, որոնց ապառքն ավելի վաղ է առաջացել, ապա՝ ավելի ուշ առաջացածներինը (նույն օրը տարբեր վճարատեսակների մասով ամենավաղ առաջացած ապառքների դեպքում վճարատեսակի ընտրությունը կատարվում է հետևյալ հերթականությամբ՝ սոցիալական վճարներ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ և կարգավորման պարտադիր վճարներ).

4) այն պետական տուրքի մասով պարտավորությունները, որոնց ապառքն ավելի վաղ է առաջացել, ապա՝ ավելի ուշ առաջացածներինը.

5) «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված տուգանքները:

3. Մասհանումներ կատարողի դիմումում համապատասխան ցուցում լինելու դեպքում մասհանումներ կատարողի մասհանումների կամ այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը կարող է ուղղվել առաջիկայում առաջանալիք պարտավորությունների մարմանը (այսինքն՝ վճարման

վերջնաժամկետը լրացած այն պարտավորությունների մարմանը, որոնց վերաբերյալ հաշվարկը (հաշվետվությունը, հայտարարագիրը) հարկային մարմիններին դեռևս չեն ներկայացվել, կամ ապագա պարտավորությունների մարմանը):[*4)]

XI. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Գերավճարի գումարն մասհանումներ կատարողին վերադարձվում է հարկային մարմնի միջոցով պետական բյուջե հավաքագրվող մասհանումների, հարկային և սոցիալական վճարների բոլոր պարտավորություններն օրենքով սահմանված կարգով հաշվանցելուց հետո: Ընդ որում՝ եթե գումարը վերադարձնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին ավարտվել է հերթական հաշվետու ժամանակաշրջանը, սակայն մասհանումներ կատարողի կողմից չեն ներկայացվել (հարկային մարմինը չի ստացել) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում մասհանումների, հարկերի (առևտրի հարկի, հաստատագրված վճարների) և սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք հանդիսացող՝ Արցախի[*9)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվարկները, հաշվետվությունները, հայտարարագրերը, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, հաստատագրված վճարների հաշվարկման սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություններն ու տեղեկությունները, կամ եթե լրացել է նոր վճարում կատարելու ժամկետը, ապա գումարների վերադարձն իրականացվում է նոր պարտավորությունների մեծությունները որոշելուց (մասնավորապես՝ ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների հայտարարագրերի, տեղեկությունների հիման վրա) և նոր ծագած պարտավորությունները մարելուց հետո:*[*4)]

2. Հարկային մարմնում հաշվառվող պարտավորությունները մարելուց հետո մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] *դիմաց հաշվանցման ենթակա գումարն մասհանումներ կատարողի դիմումի հիման վրա ենթակա է վերադարձման (անկախ այլ մարմիններում հաշվառվող պարտավորությունների առկայությունից):*

3. Օրենքով սահմանված կարգով վերադարձման ենթակա մասհանումների գումարները վերադարձվում են մասհանումներ կատարողին համապատասխան դիմում ներկայացնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում:

XII. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՁՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Կամերալ ուսումնասիրություն, մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն և ստուգում անցկացնելու վերաբերյալ հարկային մարմինը որոշում է կայացնում դիմումն ստանալուն հաջորդող ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Առանց մասհանումներ կատարողի դիմումի, կամերալ ուսումնասիրությամբ մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] *դիմաց հաշվանցում իրականացնելիս այդպիսի ուսումնասիրություն անցկացնելու վերաբերյալ որոշում է կայացվում հաշվանցման ենթակա գումար բացահայտելու օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում:*

2. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] *դիմաց հաշվանցելու և (կամ) վերադարձնելու մասին համապատասխան եզրակացությունը կազմվում է հետևյալ ժամկետներում՝*

1) մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] *դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը կամերալ ուսումնասիրությամբ արձանագրվելու դեպքում կամերալ ուսումնասիրության ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում.*

2) մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությամբ կամ ստուգմամբ մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] *դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու դեպքերում համապատասխանաբար ուսումնասիրությունը կամ ստուգումն ավարտելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:*

3. Սույն կարգով սահմանված ժամկետները խախտելու (բացառությամբ սույն կարգի համաձայն ուսումնասիրության կամ ստուգման ժամկետների կասեցման դեպքերի) համար հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել[*4)] *«Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե այդ ժամկետների խախտման արդյունքում մասհանումներ կատարողի օրենքով սահմանված ժամկետում չեն վերադարձվել մասհանումների գումարները:*

XIII. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԹԱՑՔԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ

1. Ուսումնասիրության ժամկետի ընթացքը հարկային մարմնի կողմից կասեցվում է, եթե՝

1) մասհանումներ կատարողի կողմից չեն ստեղծվել ուսումնասիրության անցկացման պայմաններ (այդ թվում՝ չեն ներկայացվել կամ մասնակիորեն են ներկայացվել մասհանումների հաշվարկմանը կամ կատարված վճարումներին վերաբերող փաստաթղթերը).

2) հաշվանցվող կամ վերադարձվող գումարների առաջացման հիմք հանդիսացած գործարքների հետ կապված անհնար է կատարել ուսումնասիրություն՝ մինչև քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով որոշում ընդունելը.

3) առանձին վճարումների կամ գործարքների մասով ներկայացվել են ոչ ամբողջական փաստաթղթեր, ինչի հետևանքով ուսումնասիրության անցկացումն անհնարին է:

2. Հարկային մարմնի կողմից ուսումնասիրության ժամկետի ընթացքի կասեցման դեպքում մասհանումներ կատարողը գրավոր տեղեկացվում է ուսումնասիրության ընթացքը կասեցնելու մասին՝ նշելով այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել նման որոշման ընդունման համար:

3. Ուսումնասիրության կասեցման հիմքերը վերացվելու դեպքում ուսումնասիրությունը շարունակվում է, իսկ հաշվանցման և (կամ) վերադարձի ժամկետի ընթացքը կասեցված համապատասխան գումարներն ուսումնասիրության արդյունքներով հանվում են մասհանումների չհաշվանցվող մնացորդից:

XIV. ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի հիմնավորվածության արձանագրման նպատակով մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգում անցկացվում է մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման վերաբերյալ դիմումի կամ համապատասխան ստուգում անցկացնելու վերաբերյալ մասհանումներ կատարողի դիմումի հիման վրա: Ստուգում կարող է իրականացվել առանց մասհանումներ կատարողի դիմումի, եթե ուսումնասիրության ժամանակ բացահայտվել են մասհանումների հաշվարկման օբյեկտի պակաս ցույց տալու փաստեր:

2. Մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց գումարների հաշվանցում և (կամ) վերադարձ կարող են իրականացվել նաև մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման (այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերության ճշտության ստուգման շրջանակներում) արդյունքներով, եթե մասհանումներ կատարողը ստուգման ընթացքում ներկայացրել է համապատասխան դիմում:

3. Մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման (այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման շրջանակներում) կամ մասհանումների հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգման ընթացքում ստուգվում է մասհանումներ կատարողի կողմից մասհանումների հաշվարկման համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին: Մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման (այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման շրջանակներում) կամ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգման ընթացքում ճշտվում են մասհանումների մասով մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարները:

4. Մասհանումների հաշվանցումների ստուգումից հետո անցկացված՝ մասհանումների հաշվարկման և վճարման ճշտության ստուգմամբ (այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման շրջանակներում) կամ վերստուգմամբ մասհանումներ կատարողի այլ պարտավորությունների[*4)] դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարները կամ առաջադրված պարտավորությունները կարող են ճշգրտվել, եթե հայտնաբերվել են օրենքով սահմանված պահանջների խախտման նոր դեպքեր կամ մասհանումների պարտավորությունների հաշվարկման (կամ առաջադրման) սխալներ (հաշվանցումը և (կամ) վերադարձը համարվել են չհիմնավորված):

XV. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[*14)] ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Հարկային մարմնի հաշվանցման կամ վերադարձման ներկայացրած՝ կազմված եզրակացություններում նշված գումարը ոչ ուշ, քան եզրակացությունները (կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքները) վերադաս հարկային մարմին ուղարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, նախնական կարգով արտացոլվում է հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտում (նախնական գրառում):

2. Հաշվանցում կամ վերադարձ կատարելու մասին հարկային մարմնի կազմած եզրակացությունը (իսկ մեկից ավելի եզրակացությունների առկայության դեպքում՝ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը) ոչ ուշ, քան որևէ եզրակացություն կազմելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրն ուղարկվում է վերադաս հարկային մարմին՝ եզրակացությունների հիման վրա հաշվանցումները և (կամ) վերադարձները օրենքով սահմանված պահանջներին կատարելու հանգամանքներն ստուգելու և հաշվառում իրականացնելու համար: Կատարվող հաշվանցումները կամ վերադարձը վերադաս հարկային մարմնի կողմից ընդունվելու դեպքում եզրակացությունը կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը ոչ ուշ, քան այն ստանալու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրն ուղարկվում է Արցախի[*9)] Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի[*5)] նախարարություն:

3. Արցախի[*9)] Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի[*5)] նախարարությունը եզրակացությունների կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքների հիման վրա դրանք ստանալուց ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը կատարում է անհրաժեշտ հաշվանցումները՝ անհրաժեշտության դեպքում դրանք ուղարկելով համապատասխան գանձապետական բաժանմունքներ:

4. Հարկային մարմինը բյուջետային հաշվի քաղվածքների հիման վրա հարկ վճարողների անձնական հաշվի քարտերում կատարում է հաշվանցված գումարի վերջնական ձևակերպում:

5. Գումարների վերադարձը գանձապետական հաշիվներով իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով մասհանումներ կատարողի բանկային հաշվին: Եթե մասհանումներ կատարողը չունի

բանկային հաշիվ, ապա գումարը փոխանցվում է մասհանումներ կատարողի առաջարկած առևտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով:

6. Եզրակացությունները կամ եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքներն ստանալուց հետո Արցախի[*9)] *Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի*[*5)] *նախարարությունը գումարների վերադարձման համար օրենքով սահմանված ժամկետներում (դրանց ավարտից ոչ ուշ) իրականացնում է գումարների վերադարձը:*

XVI. ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Անհրաժեշտության դեպքում սույն կարգի կիրառման հետ կապված գերատեսչական իրավական ակտերն ընդունում է հարկային մարմինը[*5),*9)]*:*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*8)]

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավտոմոբիլային ճամապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի ուժի մեջ մտնելուն, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:
2. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության դրույթները կիրառվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված խախտումների մասով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*9)]

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավտոմոբիլային ճամապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելուն, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած մասհանման չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**1) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (06.12.06 ՀՕ-329) խմբագրությամբ:*

**2) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (24.06.09 ՀՕ-42-Ն) խմբագրությամբ:*

**3) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 ՀՕ-74-Ն) խմբագրությամբ:*

**4) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (27.12.11 ՀՕ-98-Ն) խմբագրությամբ:*

**5) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.12 ՀՕ-36-Ն) խմբագրությամբ:*

**6) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.13 ՀՕ-118-Ն) խմբագրությամբ:*

**7) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.12.14 ՀՕ-64-Ն) խմբագրությամբ:*

**8) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.15 ՀՕ-69-Ն) խմբագրությամբ:*

**9) «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17 ՀՕ-64-Ն) խմբագրությամբ:*